



ՀՈՎՍԵՓ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Վ ԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՄԱՍԻՆ



Եհափառ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը այնպիսի մի նշանակալից երևույթ է մեր կյանքում, որ բոլորիս սրտերը լցնում է ուղախության զգացմունքով և էլ ամելի բազմապատկում մեր սերն այդ սքանչելի մարդու հանդեպ:

Մազմամբ գրուղացի, հին Արցախի նահանգից, օժտված բնատուր ընդունակություններով, ունենալով բացառիկ զգայուն և կարելից սիրոտ, նա անցավ ուսման ու կրթության բողոք աստիճաններով, մինչև բարձրագույնը: Բայց ամեն ժամանակ և ամեն տեղ ու ամեն հասակում նա մնաց միշտ միևնույնը՝ շերտեռանդ հավատացյալ հոգևորական, շերտ հայրենաւեր, ազնիվ քաղաքացի, մարդ՝ բառի կատարյալ իմաստով:

Մենք, որ բախտ ենք ունեցել Գևորգյան հոգևոր ճեմարանում նրան աշակերտել: և ապա երկար տարիներ նույն մեծ հիմնարկում նրա տեսչության ներքո ծառայել ու պաշտոնակից լինել և այնուհետև էլ, մինչև 1934 թվին նրա արտասահման մեկնելը, շարունակ շփվել հետո, մեծ փափագ ենք զգուած, իրեն ականատես, մի քանի հիշողություններ վեր հանել նրա հարուստ ու բազմապատճակ կյանքից, որոնք կարող են նյութ ծառայել նրա կենսագրության համար, ոմ կողմից էլ այն կազմվելու լինի: Մենք նրա գործունեության մատենագրական, պատմագիտական, հնագիտական մանրանկարչության ուսումնասիրման բնագավառները շենք շոշափի, այլ կտանք ժամանակագրական կարգով նրա կյանքի գիտակոր ուրվագծերը,

որոնք նրան այնքան բարձրացնում են մեր աշքում, որպես ժողովրդական մարդու և առաջինի հովվապեսի:

Համարյա հիսում տարի առաջ, 1897 թվի գարնանը, Գարեգին ասրկավագող Հովսեփյանը, բարձրագույն կրթություն ստացած, արտասահմանից վերադարձավ Էջմիածին: Մենք, 12 ընկերներով, սովորում էինք ճեմարանի Ա լսարանում: Ուսման տարին վերջանալու վրա էր և բնականաբար Գարեգին սարկավագը չէր կարող դասավանդել մեզ մոտ, սակայն նրա համբավին այնքան էր տարածած մած, որ մեր ընկերներից ոմանք անհամբերությունից դրդված ջտապեցին գնալ նրա մոտ, ծանոթանալ հետք և տեղեկություններ թերել նրա մասին: Բոլորն էլ հիացած էին նրանով ու հատկապես շեշտում էին նրա նվիրվածությունը հայ ժողովրդին ու եկեղեցուն:

Զպետք է մոտանալ, որ այդ սկ ուսակցիամբ տարիներին էր: Ցարական կառավարությունը մի տարի առաջ, 1896 թվի Հունվարին, առանց սպասելու նույնիսկ ուսումնական տարվա ավարտմանը, փակել էր Կովկասի թուղոր Հայկական եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք բացառապես հայ ժողովրդի կովակներով էին պահպատ:

Հաջորդ 1897—1898 ուսումնական տարում, եղր մենք արդեն Բ լսարանի ուսանող էինք, Գարեգին սարկավագը մեծ ոգերությամբ մեզ հայոց հին մատենագրություն էր ավանդում ու միշտ խորհուրդ տալիս բնագիրների վրա ուսումնասիրել այդ առարկան: Այդ ուսարված աշնանն էլ նա արծուած ձեռնադրվեց: Պետք էր տեսնել նրա անդրանիկ պատարագը. դա մի կատարյալ ողբերգություն էր. նրա նման զգա-

յուն սիրտ ունեցողն ուրիշ կերպ էլ չէր կարող վարպել, ամբողջ պատարագը, մանավանդ ահեղ խորհրդին մերձենալիս, լացով ու արտաստութով անցկացրեց: Դրանից հետո նա կարծես նոր լիցք ստացած ամեն գործում առաջավոր էր հանդիսանում:

Ուստամնական ստարվա ընթացքում Գարեգին հայր սուրբը մեզ նախապատրաստում էր գալիք ամառային էքսկուրսիային, որ պիտի կատարեինք Դարալազգագոտամ, Վայոց ձորում. գրավանություն էր մատնանշում կարդալու համար, հաճախ գալիս էր մեզ մոտ, որոշ պարզաբանումներ անում, շարադրում ուսումնասիրման այն օբյեկտները, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնեինք գիշավորապես. — Ժողովրդական անգիր բանահյուսություն, հեթիաներ, պատմվածքներ, երգեր, տնային կահարասիր, գրուղատնտեսական գործիքներ, տղամարդու ու կանացի հագուստատեղեն. պատահական նյութեր, որոնց մեջ հարկավ, ամենակարևոր տեսքը արձանագրություններն էին բնուած: Աշխատանքն անմասն էր դասավորում, որ բոլոր էլ վերը նշված բոլոր աշխատանքները հաջորդական կարգով կատարել կարողանայինք: Մենք, 12 ընկերներս, չորս խմբի պիտի բաժանվեինք. եթե առաջին գրուղում մենք մի խումբը, օրինակ, հեթիանեներ գրի առնելով պիտի գրադիեր, ապա երկրորդ գրուղում այդ նույն խումբը ժողովով նիստ ու կացը պիտի ուսումնասիրեր, երրորդ գյուղում՝ եղած արձանագրությունները պիտի կարդար ու գրանցեր տեսություն և այն, այնպես որ մենք ամենք էլ առաջնորդի դիմավորությամբ աշխատելով որոշ փորձառություն պետք է ձեռք բերեինք նշված ուսումնափոխությունների բնագավառում: Այս էքսկուրսիայի վրա նրա համար ենք ավելի երկար կանգ առնում, որովհետև Գարեգին հայր սուրբին, առաջին անգամ, հսկապես այս ճանապարհություններին համարական ճանանակ մրայն ճանաշեցինք:

Մոտեցավ շանկավի ժամը. ուսումնական տարին փակվեց. մենք փոխադրվեցինք Դարանը և որոշ պատրաստություններ տեսներուց հետո, ուշախ տրամադրությամբ էջմիածնից, Երևանի մուշայով, ճանապարհ ընկանք դեպի Դամարդու (վայրերը հիշատակում ենք այն ժամանակվա անուններով): Մեր առաջնորդ Գարեգին հայր սուրբը ճեմարանի միջոցներից ծախսերի համար հետք որոշ գումար էր վերցրել, բայց ի պատիվ մեր գյուղական հայ ժողովրդի, պիտի առաջնք, որ 40 օր սուսող ճանապարհություն ընթացքում սննդի համար և ոչ

մի տեղ ոչ մի կոպեկ շծախսվեց: Ամենուրեք մեզ ընդունում էին գրկաբաց, ամենատեսակ հարմարություններ տալիս, նամանավանդ երբ տեսնում էին, որ մեր արշավամբի պետը մի վեղարամոր է, Մայր Աթոռից եկած: Մեզ ոչ միայն սննդով էին գործացնում, և ամենայն պատրաստակամությամբ հայր սուրբի ցուց տված վայրեն առաջնորդում, այլ և այնպիսի նոր, հություններով հարուստ վայրեր տանում, որոնք հայտնի էին միայն տեղացիներին և դեռ անծանոթ գրականությանը:

Այն ժամանակներն այդպիսի մի արշավամբի երևալը մեր գյուղերում հազվագյուտ երևուցի էր. մարդիկ հետաքրքրությամբ շրջապատում էին մեզ ու զարդան քով զննում, մինչև որ մենք սկսում էինք խոսել ու աիրու տալիս մեր առաջ բացվելու. երբ իմանում էին, որ մեզնից շատերը գյուղացիներ են, զարդանում էին, թե միթե գյուղից էլ կարող են կրթված մարդիկ գուրս գալ ու երանի էին տալիս մեզ՝ մեր բախտավոր միճակի համար:

Օգովելով Խոր-Վիրապի վանքի մոտիկությունից, Ղամարզովից գնացինք այստեղ՝ վանքը տեսնելու համար: Նկատենք, ուր Ղամարդուից մկսած ճամբորդում էինք ուսումնական մինչև ճանապարհորդության ավարտելը: Մինչև անգամ Գարեգին հայր սուրբն էլ մեծ մասամբ ուսուվ էր զալիս, որ մեզ ավելի էր քաշալերում ու ոգեվորում: Ճիշտ է, հետո Դավալու գյուղում հայր սուրբը մի ծի գնեց, գլխավորապես մեր ունեցած բեռը բարձելու համար, բայց նա շատ քիչ էր օգտվում ճիշտ ու մեծ մասամբ քայլում էր մեզ հետ ոտով: Այդ ճիշտն, որ գնված էր 35 ուրբակ, ճանապարհորդության ժամանակ այնպես խնացի մոտ, հյութալի խոտավետ արոտներում արածացնելով, որ ճանապարհորդության վեճջում, նոր Բայազետում ծափեցինք 50 ուրբակ, որ և ուրախ ծիծառի նյութ դարձավ բոլորին համար: 15 ու այդ անակնկալի օգուտը հայր սուրբը, որ պես ճանապարհածախա, բաժանեց նրանց, որոնք նրա հետ էջմիածնին չեին վերադառնարու, այլ գնալու էին ամառային արձակուրդի մնացողն իրենց ծնողների մոտ անցկացնելու:

Խոր-Վիրապից վերադարձանք Դավալու ու այստեղից էլ, հրաժեշտ տալով Արարատյան դաշտին, բարձրացանք Զնջրու, ուր դժենով մեր ցանկացած գավառը: Զմունանք ասելու, որ Գարեգին հայր սուրբը լուսանկարչական գործիք էլ ուներ. ցեղեկը հանած նկարները նա նույն գիշերը

մեզնից երկուսի օգնությամբ պատրաստում էր կարմիր լապտերի լուսի տակ: Սովորաբար այդ գործողությունը կատարվում էր վանքերի խորաններում, որոնց նեղ-լիկ լուսամուտները հեշտությամբ կարելի էր լինում ծածկել: Զնշրջությոց սկսած մինչև ճանապարհորդության վերջը լուսանկարչական գործիքն իր գերի մեջ էր. ճանապարհում այստեղ պատրաստված նը. կարներից շատերը լուս տեսան Գարեգին հայր սովորի ժամանականք կամ Պը-ռոշեանքո նշանալով աշխատության մեջ:

Մենք այստեղ միայն կհիշենք մեր այցելած վայրերից ամենազիսավորները, որտեղ սովորականից ավելի երկար ենք կանգ առել. Զնշրջությոց հետո դրանք նև՝ Ղափախաշ, Ղաշխա, Ելիփի, Վրիթանես, Այնաշուր, Արփա, Նորավանք (Ամաղու), Խաշխի, Կորադուզ, Աղատեր, Փաշալու, Փոր, Մարտիրոս, Գնդեվաղ, Հերհեր, Ս. Խաչ վանք, Մալիշկա, Բաշքենդ, Ալայազ, Հասանքյանդ, Քարավորի, Սելիմի քարվանսարա, Աղյաման, Նոր Բայազետ, Նորադուզ, Ալան:

Օրեցօր ուշագրության արժանի այնքան նորանոր բաներ էինք տեսնում, որ սահմանված 40 օրը շատ ու շատ քիչ էր մի այդպիսի հարուստ ու հետաքրքիր շրջան դիտելու համար: Զնշրջությոց սկսած մինչև վերջն՝ ամբողջ Վայոց ծորը մի ընդառակ բնական թանգարան է: ճարտարապետական շենքերի մնացորդների մի այնպիսի հոյակապ առատություն կա, որ ոչ միայն Հարաստանում, այլ թիրևս ուրիշ նորկրներում հագիւ կարելի է գտնել նմանը. և այս բոլորը միայն մի գավառում: Հուշարձանների մեծ մասը 11—14 դարերից է մնացել և հատկապես 12—13 դարերից: Որտեղ կարելի էր անմատչելի բերդ շինել, շինվել է, որտեղ կարելի էր վանք, անապատ, մատու կառուցնել և խաչքար կանգնեցնել, արվել է, տրտեղ կատելի էր կամուրջ գցել, ոցվել է. կարծեն թե այդ դարերում ապրող մեր պապերը, բարի նախանձից դրված. իրենց հետնորդների համար ազատ տեղ չեն թողնել, որ սրանք էլ իրենց հերթին գալիք սերունդների համար մնայուն հիշակարանները թողնեն:

Հապա երկրի գեղեցկությունը. գրչով անկարելի է նկարագրել նրա գունեղ պեսպիսությունը. պետք է անձամբ շրջել ուսուվութիւնիկան աշքով տեսեական աշքով տեսնել այդ բարձրաբերձ սարերը, անդնդամուր ձորթը, ճեղքված լեռնախորշերը, միին քարանձակները, մատուար անտառները, գույնգույն ու վառ ծաղկիկներով ծածկված սրանչելի մարդաբետինները, սարնորակ մշտաբով բաղմա-

թիվ աղբյուրները, ոլորապտույտ փրփրուն գետերը:

Իսկ հուշարձանների բազմագաւությունը, հոյակապությունը. բազմաթիվ բերդեր, անհաշիվ լանքեր, մեծ մասմբ կիսավիր, մատուններ, ժայռերի մեջ փոփլած եկեղեցիներ ու խաչքարեր, ամենանողը տեսակի առանձին կանգնեցրած խաչքարեր, տապաններ, գերեզմանաքարեր, կամուղներ և այլն, և այլն եղ զարմանալի չէ, որ հիշատակարաններով հարուստ մի այսպիսի վայր ընկնելով, Գարեգին հայր սուրբն բուրիս աշխատեցնում էր, հորդորում օգտվել հանգամանքից ու մեր վերը նշած ծրագրով շանալ հարուստ նյութ հավաքել: Նա մեզ արթիքավոր ցուցումներ էր տալիս հատկապես արծանագությունների ընթերցման գործում. շատ հաճախ ձեռքին պահած նախորդների գրանցած արծանագությունները, մեզ կարգալ էր տալիս իսկական ներող, պատերին գրածները և համեմատելով նշանակում էր նկատված տարրեցությունները, միաժամանակ մեր ուշադրությունը հրավիրելով արծանագություններում ընդունված կրճատումների ու այլ ձևի միավորումների վրա: Մենք նրա ձեռքի տակ աշխատելով այդ գործում այնքան վարժեցինք, որ այնուհետև շատ աշխատանքներ ինքնուրույն կեցովով էինք կատարում:

Հատկապես երկար, ամբողջ երեք օր կանգ առանք նորավանքում՝ Ամաղուում, որովհետեւ այստեղ ուսումնասիրելու: Նյութ շատ կար: Դամբարան կոշված մասում հանգչում է պատմագիր Ստեփաննու արքեպիսկոպոս Օրբելյանի աճյունը. նրա ազ ու ծախ կողմը ուրիշ շատ բարձր հոգեորականների ու իշխանների դամբարանների կան:

Այստեղ Գարեգին հայր սուրբը մի առանձին հոգատափություն էր ցուցաբերում մեր նկատմամբ, քանի որ գրուղում չէինք, այլ առանձնացված վանքում, ավելի ճիշտ վանքերում, քանի որ եզեր չոկ-ցոկ գեղեցիկ շենքեր զարդարում էին այս մեկուսացված վայրը: Նա մեր ապահովության համար մոտակա Ամաղու գուղից հատուկ պահապան վաֆենց իր օգնականով հանդերձ, իսկ սննդամթերքի համար ամենակին նեղություն չինք բաշխում, որովհետև մոտիկ հայ գյուղ հոգացել էր այն:

Մեր ճանապարհորդությունն այնքան բազմաթափանդակ ու հետաքրքիր էր, որ շիմացնաք, թե ինչպես Քարավլիից գուրս գալով հրաժեշտ տմինք Վայոց ծորին, Դարրագայազին ու մտանք Քեղարքունիք: Մելիմի քարվաննարայում հանգիստ առնելով,

շարունակեցինք մեր ճանապարհը և գիշե-
ռելով Ադրբյամանում, մյուս օրը մտանք
նոր Բայազետ ու այստեղից էլ անցանք
նորադուզ: Չմոռանանք հիշել և այն, ոռ
Գարեգին հայր սովորը ճանապարհորդու-
թյան ժամանակ արժեքավոր հնություններ
էր հավաքում - հին դրամներ և այլ փ-
ոթք: Այստեղ նորադուզում եկեղեցու մե-
տափափործ սրանչելի հին վարդապէջը
նրա ուշադրությունը գրավեց և հետագա-
յում նորով փոխարինելով, այն բերել տակց
էշմահծին, այդ վարափուրը թանգարանի
ամենագեղեցիկ զարդերից մեկը դարձավ:

Քառասնօրյա ճանապարհորդությունն ա-
վարտված էր, նպատակն իրագործված,
արդյունքն ավելի քան բավարար: Մեզ
մնում էր այն ժամանակվա ձկնորսական
նավով. Նորադուզից գնալ Սևան: Հաջորդ
օրը, Վարդավառին, նրա ուսման էր Բախ-
տին հաճելի եղավ Սևանա լճի վրա փորձել
մեր առաջնորդի կայունությունը, դիմաց-
կումությունը:

Նորադուզից ճանապարհ ընկանք ցերեկ-
վա ժամը 1-ին, այն հաշվով, որ 2-3 ժա-
մից հետո լինենք Սևանում. բայց ծովակն
մկանց ալեկոծվել. արևելյան քամին մեր
նավակը քլում էր դեպի արևմտութք, դեպի
ժայռոտ ափերը, այն ինչ մեր ուղղությու-
նը պիտի լիներ դեպի հյուսիսից: Երկու նա-
վավարներն էլ ակսեցին անհանգստության
նշաններ ցույց տալ ու ամեն կերպ աշխա-
տում էին նավակը հետու պահել արևմտյան
ափերից: Քամին սկսեց սաստկանալ. այն-
պիսի ափերներ առաջացան, որ մենք ապշե-
ցինք, թե մի՞թե փոքրիկ լճի վրա կարող էին
այդպիսի ահազին ծովալին ալիքներ գոյա-
նալ: Սակայն Գարեգին հայր սովորն ան-
նկում էր. նա մեզ սիրու էր տալիս, որ
ոչինչ չի պատահի, և մեզ ափելի հանդու-
տացնելու համար սկսեց երգել օՄով կեն-
ցաղոյս հանապազ զիս ալեկոծէ: Մորկեալ
ալիք թշնամին ինձ յարուցանէ: Նաւապետ
բարի, լիր անձին իմոյ ապաւնա շափակա-
նը, հորդորելով ձայնակցել իրեն: սակայն
բաժեղացող քամին խացնում էր մեր ձայ-
նը, իսկ նավակն ավելի ու ավելի մեծ ու-
ժով էր շարտվում դեպի արևմտյան ափին
Սկսեցին երևալ ստորջրյա ժայռերից ցցուն
ծայրերը. մեր նավակը դհաավ նրանդ, բայց ժծակվեց: Նավավարներն այլայվե-
ցին: Մեզնի ոմանք արդեն փուփել էին նա-
վակի հատակին ու առևս փության
հույս յունեին: Նավակը թեթև տաշեղի պես
թշում էր ալիքների վրաւեց, հետո ասա-
վիժողեն ցած քննում: Ուժգին ալիքները
սկսեցին ներխուժել նավակի ներսը, բայց

մեր առաջնորդը, միշտ ոտի վրա ու հայաց-
քը Սևանին հառած, չէր ընկծվում, փրկու-
թյան էր սպասում ու երբեմն էլ ցուցում-
ներ տալին նավավարներին, որոնք կաշվից
դրանք էին գալիս նավակն արևմտյան ափից
հետու պահելու համար: Այսպես 5-6 ժամ
մաքառելով բնության ահեղ տարրերի դեմ,
նավավարները նկատեցին քամու մեղմա-
նալու նշաններ և վերահաս մահվան վտան-
գի անցում: Նրանց դեմքի վրա ժպիտ փա-
ղաց: Ժպտաց և Գարեգին հայր սուրբը.
նավակի հատակին կուշ եկած մեր ընկերու-
ները գույխները բարձրացնելով համոզվե-
ցին, որ վտանգն անցել է: Նավակն այժմ
ուղիղ շարժվում էր դեպի Սևանա կղզին,
որն արդեն պարզ նկատելի էր. նավավարնե-
րը պատմուամ էին, որ նրանք այդպիսի ուժեղ
փոթորկի չէին հանդիպել դեռ. նրանք շատ
վախսեցել էին ստորջրյա ժայռերից, որոնցից
շատ կարին լճի այդ մասում. ժայռերին
զարնվելուց նավակը կարող էր հեշտու-
թյամբ փշրվել, ընկղոզվել ու բոլորս էլ
կիսողը մեխնք:

Հրաշքով ազատավելով երբ կղզում ափ-
իշանք, ովախապին աղաղակներով մեզ դի-
մավորեց ուխտավորների մի ահազին բազ-
մություն. բուրն էլ զգացվեցին, մեր առաջ-
նորդին ու մեզ մահվան ձիրաններից ա-
ղատված տեսնելով. նրանք կղզու վրայից
նկատել էին մեր օրհասական պայքարը
բնության տարրերի դեմ: Սևանի միարան-
ները ցնծության մեջ էին տեսնելով Սայր
Աթոռի միարան Գարեգին հայր սուրբին իր
աշակերտներով հանդերձ փրկված. ինչպես
պարզվեց, նրանք, մեր օրհասական վիճակը
տեսնելով, խաչ ու խաչվառով աղոթքի էին
դուստ եկելու երկնքից փրկություն հայցելով
մեզ համար:

Մենք անշափ ուրախ էինք մեր սիրելի ու-
սուցչի կյանքի փրկության համար. նեղու-
թյան, փորձանքի ահեղ ժամերին նա պա-
հապան հրեշտակի պես հովանի եղավ մեզ
ու իր անձնական օրինակով քաջալերեց և
սովորեցրեց երբեք լինկմինը, շթունալ,
շքվել: Նրա այս գեղեցիկ հատկությունն
անբաժան մնաց նրանից իր հետագա ողջ
կյանքի ընթացքում: Ուրիշ փորձություններ
էլ վիճակվեցին նրան, բայց նա անսասան
մնաց ու արդությամբ հաղթահարեց բոլոր
փորձությունները:

Հետագա երկու տարիներին Գարեգին հայր
սուրբը շարունակեց դաստիարակութել ճեմարա-
նում, բայց հետո ստիպված նդավ առժամա-
պես բաժանվել ճեմարանից ու իր աշակերտ-
ներից:

Գարեգին Հայր սուրբը ջերմ սիրով կապ-
ված էր նաև Մատենադարանի, ձեռագրատան
հետ, որտեղ երկար նստում ու մանրակրկիտ
ուսումնասիրություններ էր կատարում.
րայց երբ Վեհափառն անհրաժեշտ էր համա-
րում նրան մի այլ գործի տաղարկել, նա
անտրունչ, ամենայն սիրով կտրվում էր իր
սիրած աշխատանքներից ու գնում այնտեղ,
ուր Վեհն էր հրամայում Այսպես 1900 թվին
նա, մի տարի ժամանակով, գնաց Թիֆլիս,
իրբ թեմի ժամանակավոր կառավարից ու
մնաց մինչև նոր թեմակալ առաջնորդի նշա-
նակումը: Երևանի թեմական դպրոցը տեսառչ
չուներ. նրա հոգաբարձությունը հարմար
թեկնածու չէր գտնում և ահա այդ հոգաբար-
ձության խնդրանոր երիմյան Հայրիկը հո-
ժարում է, որ Գարեգին վարդապետը Երևան
տեղափոխվի ու ստանձնի դպրոցի տեսչու-
թյունը: Նրա տեսչությունը Երևանի թեմական
դպրոցում տևեց երեք տարի, 1901—1904
թ. թ.: Խոսք չկա, որ նրա օրոք դպրոցը բեղ-
մրնավոր աշխատանք կատարեց: Երեք տա-
րի հետո դպրոցի հոգաբարձությունը, զիշե-
լով Վեհափառի ցանկությանը, մի հարմար
տեսչացու գտավ Գարեգին վարդապետին
փոխարինելու համար և նրան մեծ պատվով
ճանապարհ դրեց էջմիածին:

Հայագետ Կ. Կոստանյանից հետո Գևորգ-
յան ճեմարանին հարկավոր էր մի փորձված
ու հմուտ գելավար: Երիմյան Հայրիկը միակ
հարմար թեկնածու համարեց Գարեգին վար-
դապետին և վերջինս ամենայն հնագանդու-
թյամբ հանձն առաջ ճեմարանի տեսչի պա-
տասխանատու պաշտոնն ու 1905—1906 ուս-
տարին փակեց զգալի նվաճումներով:

Այնուհետև Գարեգին Հայր սուրբին մենք
մեծ մասամբ տեսնում ենք Մայր Աթոռում,
զիսխավորապես Մատենադարանում աշխա-
տելիս. նա միաժամանակ ուսուցչություն էր
անում թե՛ ճեմարանում և թե՛ Երևանի թե-
մական դպրոցում, էջմիածնից շաբաթական
երեք անգամ Երևան մեկնելով: Հիշենք նաև,
որ Գարեգին Հայր սուրբը մշտական աշխա-
տավից էր հանդիսանում Հայրապետական
պաշտոնական «Արարատ» ամսագրի, ուր նա
միշտ լուրջ ուսումնասիրություններ էր զե-
տեղում մեր հարուստ անդյալի շատ ու շատ
խնդիրների վերաբերյալ նա, իրեւ ձեռնհաս
միաբան, վարել է նաև ո. Հոփիսիմեի վանքի
վանահայրությունը, Գևորգ Ե-ի կաթողիկո-
սության օրոք երկար տարիներ ապրելով
այնտեղ:

Եր զիտական աշխատառությունների և ու-
սումնասիրությունների առնչությամբ ամառ-
ները նա հաճախ էր ուղերդվում արտասահ-

ման: Երբ բռնկվեց առաջին համաշխարհա-
յին պատերազմը, Գարեգին վարդապետը
գտնվում էր Թուրքիայում, Սեբաստիայում,
ուր գնացել էր տեղում գտնվող ձեռագրերն
ուսումնասիրներու համար: Նա մեծ դժվարու-
թյուններով կարողանում է հասնել Սև ծովի
Սամսոն նավահանգիստը, այնտեղից էլ
Բաթումի ու ապա էջմիածին:

Հարյուր հազարավոր տղամարդիկ կտրվե-
լով իրենց հարազատներից ու աշխատանքից
մեկնեցին զատերազմի դաշտը: Տաճ-
կական ուզմաճակատը շատ մոտ էր.
սարսափելի լուրեր էին պատում, խոռվելով
հայ ժողովրդի հանգիստը. հայ ժողովուրդը
նորից պիտի տրորվեր, ոտնակոխ լիներ
սահմանի երկու կողմում էլ: Ռուսական բա-
նակի ղեկտեմբերյան նահանջը համեմատա-
բար թիվ թվով (10-15 հազար) գաղթական-
ներ բերեց էջմիածին, այն էլ մեծ մասամբ
Բագրևանդից, Ալշակերտից: Հայ ժողովր-
դի առաջ նյութական աշակցության շնորհիլ
Մայր Աթոռը կարուղացավ պատսարել նո-
րանց: Զգայուն սրտի տեր Գարեգին Հայր
սովորը չէր կարող անտարբեր մնալ այս ա-
ղետի հանդեպ: Ռուսական բանակի առաջ-
խաղումից հետո նա կտրուկ միջոցների դի-
մեց և զադիմականներին վերադարձեց ի-
րենց տեղերն, ապահովելով նրանց սննդա-
մթերքով: Բայց շատ կարծ տեսեց այդ: 1915
թվի հունիսին լսցինք, որ ոռուական բանա-
կի նորից նահանջում է և նրա հետ միասին
դեպի Կովկաս է շարժվում ամբողջ Վաս-
պուրականի հայությունը. ի՞նչ էինք սպա-
սում և ինչ ստացվեց: Վասպուրականի հո-
վասուն վալորեին սովոր ժողովուրդը, հու-
մայակ շոգերին, գաղթի ամենադժուակ պայ-
մաններում, հավաքվում էր Արարատյան տո-
թակեզ դաշտում, խոնկում էջմիածնի շուրջը,
միակ փրկությունը նրանից սպասելով:
Քանի՛ քանի՛ հազարավոր տղամարդ ու կին,
մանուկ ու ծեր զիկվեցին կյանքից: Էջմիա-
ծինն իսկույն օգնություն կազմակերպեց, գո-
նե ողջ մնացածների կյանքը փրկելու հա-
մար: Կազմակերպվեց եղբայրական օգնու-
թյուն, որը զիսավորելու նշանակվեց Գարե-
գին վարդապետը: Զանազան վայրերից շատ
հայ մտավորականներ էին գալիս էջմիածին
հայ ժողովրդի փրկության գործի կազմա-
կերպմանը մասնակցելու համար: Էջմիածին
եկավ նաև մեր մեծ բանաստեղծ Հովհաննես
Թումանյանը, որը ամառախն երկու շոգ ա-
միսներ մնաց էջմիածնում՝ հորորդելով ա-
մեն ինչ մի կողմ զնել և զբաղել միմիայն
ժողովրդի փրկության գործով:

Կիմային անսովոր լինելու հետևանքով

սկզբում տասնյակներով, ապա հարյուր-ներով մարդիկ էին մեռնում օրը: Գարեգին հայր սուրբի կարգադրությամբ ժողովուրոք էշմիածնից տեղափոխվեց նախարենային շրջանները, որն ունեցավ իր բարերար աղոթեցությունը. նվազեց մահացությունը, Ճեմարանն իր հարակից բոլոր շենքերով տրամադրվեց հիվանդների ու տոր ճրեխանների տեղափորման համար: 1915—1916 ուսարում ճեմարանն իր սաների համար փակ մնաց, բայց դրա փոխարեն հազարավոր որք երեխաններ փրկվեցին: Գարեգին հայր սուրբը մոռացած հանգիստ ու քուն, գիշեր, ցերեկ զբաղված էր հայ ժողովրդի փիզիկական գորությունը փրկելու գործով և նա տող չափով հասավ իր նպատակին. գաղթած ժողովոյի մեծ մասը փրկվեց. հնտագայում որբերն էլ տեղափոխվեցին Երևան ու այլ վայրեր և Ճեմարանը 1916—1917 ուս. տարում վերսկսեց իր աշխատանքը: Գարեգին հայր սուրբի տեսչության այս շրջանում, չնայած պարենային սուր վիճակին, ուսանողության սննդի գործը լավ էր կազմակերպված, շնորհիվ նրա եռանդուն շանքերի:

Հանգուցյալ Գևորգ Ե. կաթողիկոսը 1917 թվի գարնանը Գարեգին վարդապետին եպիսկոպոս ձեռնադրեց իր մասուցած անթիվ ծառալությունների համար:

1917—1918 ուս. տարին սկսվեց Խոռվահույզ պայմաններում. նորից լուրեր էին պտտում նոր պայթի ու թուրքական արշավանքի մասին. ստեղծվել էր մի կացություն, որն անհնար էր դարձել խաղաղ դպրոցական աշխատանքով դրադիլու: 1917 թվի դեկտեմբերի վերջին ճեմարանը փակվեց և ինքը անցավ զինուորական իշխանության ձեռքը: Այդ տարիններին Գարեգին Սրբուանին տեսնում ենք ամենուրեք, ժողովրդի մեջ, որ նա շանք էր խնայում թեթևացնելու նրա տանջանքները:

1920 թվի աշնանը, երբ թուրքերը արշավեցին Հայաստանի մոտ, Գարեգին սրբազն հանգիստ նստել էշմիածնում էր կարող նա մեկնում է Կարս. սակայն, ոժքախտար այստեղ, Կարսի ժողովրդի հետ միասին, նա գերի է ընկնում թշնամու ձեռքը: Գերի վիճակում անգամ, նա կարողանում է մասամբ մեղմել թշնամու վայրագություններն ու բազմաթիվ անձանց ու որբերի փրկել:

Այս մեծ փորձության էլ դիմացավ Գարեգին սրբազնը և, ինչպես հետո ինքն էր պատմում, մի տեսակ հրաշքով անսպասելիորեն ազատվելով, գալիս է էշմիածին, ուր վերջապես հանգստություն է գտնում նորահաստատ սովետական իշխանության հովանուներու, իր կրած այնքան տառապանքներից հետո:

Միանգամայն ապահով լինելով հայ ժողովրդի բախտավոր ապագայի նկատմամբ և սրտանց ողջունելով սովետական կարգերի հաստատումն ու դարավոր կապերի վերականգնումը Ռուսաստանի հետ, Գարեգին սրբազնն այսուհետև հանգիստ սրբությունը է իր ընդհատված գրական աշխատանքները կարգի բերելու և ավարտելու գործին: Այս կապակցությամբ սրբազնն 1934 թվին ուղևորվում է արտասահման, որտեղ և հնտագայում ի տրիտուք իր փառավոր վաստակների, ընտրվում է Տանն Կիլիկիո կաթողիկոս:

Արտասահմանում գտնվելով նա շերմ կազ է պահպանում Մայր Հայրենիքի ու Մայր Աթոռի հետ, որոնք նրա ողջ կյանքի իմաստոն են կազմել: Հայրենական մեծ պատերազմի տարիներին, նրա չերմ կոչերին արձագանքելու, Սփյուռքի հայությունը իր առաջ նվերներով աջակցեց մեր բազարի Կարմիր Բանակի հաղթանակին:

1945 թվի ամռանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի նորորությանը մասնակցելու համար Կիլիկիո Նորընտիր Շնորհազարդ Կաթողիկոսն անձամբ եկավ էշմիածին, հանդիսադիր եղամ նորոնտիր Ամենայն Հայոց Վեհափառ Գևորգ Զ Կաթողիկոսի սուրբ Օծման արարողությանը, եր վարոտն առաջ Հայաստանից, օրհնեց ու վերադարձավ իր Աթոռը:

Մի հնտագարձ հայացք ձգելով նյա կյանքի բոլոր էտապների վրա, իրավամբ կարող ենք ասել, ահա՝ մի բեղմնավոր կյանք, որ պատկանեց մեզ բոլորին, հայ ժողովրդին, հայ եկեղեցուն:

Նրա ծննդյան 80-ամյա հորեւանի առթիվ ցանկանք բոլորս էլ, որ Տանն Կիլիկիո Գարեգին Վեհափառ Կաթողիկոսը երկար ապրի և միսիթարի Մայր Հայրենիքի, Մայր Աթոռի ու հայ ժողովրդի ծաղկման և բարգավաճման հնտագառ բուռն վերելքով:

